ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ԵԴ2/7583/02/25

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23.07.2025թ. **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ.Մ.Բունիաթյանի, ծանոթանալով «Արտաշատի ԷՑԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շանթ-Մեյրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումին ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «ՎՄՎ Քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով գնահատող հանձնաժողովի արձանագրությունը (որոշումը), որպես հետևանք՝ «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և հաղթող ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Արտաշատի ԷՑԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շանթ-Մեյրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Հեղինե Մանուկյանի կողմից 21.07.2025 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «ՎՄՎ Քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով գնահատող հանձնաժողովի արձանագրությունը (որոշումը), որպես հետևանք՝ «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և հաղթող ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատավոր Ռ.Բունիաթյանին է մակագրվել և հասանելի դարձել 22.07.2025 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով,

բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Ներկայացված հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների պահանջները:

Ուսումնասիրելով հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը, դատարանը գտնում է, որ առկա է սույն գործի լուծման էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզման անհրաժեշտություն, ուստի գտնում է, որ գործը պետք է քննել դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **<u>ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:</u>**

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **<u>գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները</u>**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և ներկայացվում են Համակարգի միջոցով՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և Համակարգով ուղարկելու միջոցով:

Դատարանը գտնում է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները, այն է՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում՝ ապացույցները պետք է ներկայացվեն էլեկտրոնային համակարգի միջոցով (բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.9-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արտաշատի ԷՑԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շանթ-Սեյրան» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «ՎՄՎ Քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով գնահատող հանձնաժողովի արձանագրությունը (որոշումը), որպես հետևանք՝ «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և հաղթող ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ և հրավիրել դատական նիստ՝ 2025 թվականի օգոստոսի 04-ին, ժամը 15:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (Արաբկիր նստավայր, ք.Երևան, Հ.Ներսիսյան 10):

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները, տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները (ապացույցները պետք է ներկայացվեն էլեկտրոնային համակարգի միջոցով):

3. Սույն որոշումը ենթակա է կատարման պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի կողմից ստացվելուց հետո հնգօրյա ժամկետում:

4. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051